



Perform Europe-ի մրցույթի հրավեր կատարողական արվեստի ոլորտում ներգրավված ընկերությունների, արվեստագետների, խմբերի, հարթակների և փառատոնների համար

Perform Europe-ի կողմից անցկացվող մրցույթի ուղեցույցը և դիմելու չափանիշները անգլերեն լեզվով հասանելի են [այս էջում](#):


Perform Europe-ը Եվրոպական հանձնաժողովի կողմից նախաձեռնված պիլոտային նախագիծ է: Ծրագրի նպատակն է աջակցել փորձերը՝ խթանելու Ստեղծարար եվրոպական երկրներում կատարողական արվեստի ստեղծագործությունների ներկայացումը, դրանք առավել շարունակական և ներառական դարձնելու նպատակով: Կարդացե՛ք ավելին [այստեղ](#):

Ներկայումս մենք պատրաստվում ենք սկսել Perform Europe-ի դրամաբեռների տրամադրման սխեմայի փորձարկումը: Այն տեղի կունենա երկու փուլով.

- 1) առաջին փուլում պրոդյուսերները (արվեստագետներ, խմբեր, ընկերություններ և գեղարվեստական ստեղծագործական նմուշներ ներկայացնողներ) և ներկայացնողները (փառատոններ, հարթակներ և այլ կազմակերպություններ, որոնք ունեն ներկայացման բովանդակություն) կարող են դիմել՝ մասնակցելու համար Perform Europe-ի խմբային ուսուցման և ցանցային զարգացման գործընթացին, որն իրականացվում է թվային հարթակում: Ծրագրի հրավերի մանրամասները ներկայացված են ստորև, հայտերի ընդունումը կսկսվի հունիսի **15-ից**: Այս փուլում ընտրված մասնակիցները կհրավիրվեն մասնակցելու ծրագրի երկրորդ փուլին:
- 2) երկրորդ փուլում, ուսումնական և ցանցային զարգացման գործընթացներին մասնակցելու ընթացքում և հետո, մասնակիցները միմյանց հետ կհամագործակցեն, համատեղ կկազմեն հյուրախաղերի և առաջխաղացման առաջարկներ, այնուհետև կդիմեն Perform Europe-ին դրամաբեռի ստանալու ծրագրին: Ընդհանուր հասանելի գումարը 1,5 միլիոն եվրո է. Դրամաբեռի միջոցով տրամադրվող գումարները կտատանվեն 10,000-ից մինչև 100,000 եվրոյի սահմաններում: Երկրորդ հրավերը կհայտարարվի հուլիսի վերջում, միայն առաջին փուլում ընտրված մասնակիցների համար (Perform Europe-ի դիմումների ներկայացման գործընթացի ավելի մանրամասն ժամանակացույցը տե՛ս [Perform Europe-ի կայքում](#)):

Առաջին փուլի դիմումների ընդունումը կկատարվի հունիսի **15-ից** հուլիսի **7-ը**՝ **Perform Europe**-ի թվային հարթակում: Քանի որ, այս առաջին հրավերը բաց կլինի միայն երեք շաբաթ, կարող եք սկսել

Perform Europe is co-initiated by a Consortium of 5 organisations and funded by the Creative Europe programme of the European Union



նախապատրաստումն այսօրվանից: Ներքևում կարող եմ ստանալ ավելի մանրամասն տեղեկություններ նախագծի մասին:

Ո՞ւմ եմ մեկն փնտրում առաջին փուլում:

Կազմակերպություններ և արտահաստիքային մասնագետներ, ովքեր.

- ունեն առնչություն կատարողական արվեստների հետ՝ թատրոն, պար, ներկայացումներ (այդ թվում նաև սիրողական), կրկես և փոփոցային արվեստ: Խնդրում եմ նկատի ունենալ, որ կենդանի երաժշտական կատարումները (ներառյալ օպերաները և մյուզիքլները) չեն դիտարկվում Perform Europe-ի կողմից, բացառությամբ երաժշտական թատրոնների:
- պրոդյուսերներ, որոնք պետք է ունեն գեղարվեստական ստեղծագործական գործեր կամ գեղարվեստական ծրագրեր, որոնք կցանկանային ներկայացնել այլ երկրներում՝ ներկայանալով ֆիզիկապես, թվային կամ այլ եղանակներով, 2021-ի հոկտեմբերից մինչև 2022-ի հունիսի վերջը,
- ներկայացնողները պետք է ունենան փոռատոններ, հարթակներ, կամ այլ ծրագրեր և պետք է ներկայացնեն գեղարվեստական ստեղծագործությունը այլ երկրից 2021-ի հոկտեմբերից մինչև 2022-ի հունիսի վերջն ընկած ժամանակահատվածում,
- գործում են Ստեղծարար եվրոպական երկրներում* (ամբողջական ցանկը տե՛ս [այս էջում](#)) կամ Միացյալ Թագավորությունում
- ունեն տեւական, թե ինչպես համագործակցել սահմաններից դուրս՝ ռեսուրսների համատեղ օգտագործման, արդարության և համերաժիսության սկզբունքների գործածման միջոցով
- արդեն ներգրավված են հյուրախաղերի կամ արվեստի տարածման ալտերնատիվ կամ նորարարական գործունեության մեջ, ինչպես նաև
- բաց են նորարարությունների համար և ունեն տեւական, թե ինչպես դա անել, սակայն իրականացնելու ժամանակ ունենում են բազմաթիվ սահմանափակումներ:

Այս հրավերին մեկն հատկապես հորդորում եմ մասնակցել այն կատարողներին և ներկայացնողներին, որոնք միջազգային գեղարվեստական համայնքում դեռ մեծ հանաչում չունեն: Մենք ողջունում ենք բոլոր այն դիմումները, որոնք կներկայացվեն կանանց, գյուղական վայրերում բնակվող արտիստների և գործող կազմակերպությունների, անապահով սոցիալ-տնտեսական կամ էթնիկ ծագում ունեցող անձանց, LGBTQIA+ համայնքի ներկայացուցիչների, հաշմանդամություն ունեցող և ցանկացած այլ անձանց կողմից, որոնք բավականաչափ հանրաճանաչ չեն կատարողական արվեստների ոլորտում:

Ի՞նչ կդահանջվի Ձեզանից հունիսի 15-ին մեկնարկող առաջին փուլի ընթացքում:

- Ընդհանուր տեղեկատվություն Ձեր կազմակերպության մասին,

- Ընդհանուր տեղեկատվություն Ձեր գեղարվեստական ստեղծագործության / ստեղծագործությունների մասին (պրոդյուսերիների համար) կամ Ձեր ներկայացման բովանդակության մասին - փառատուն, հարթակ, բացօթյա տարածք - (ներկայացնողների համար), որը հանդիսանում է համագործակցության առաջարկի մի մաս,
- Ձեր տեսլականն ու գաղափարները գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծման և ներառական եղանակով տարբեր վայրերում մարդկանց հասանելի դարձնելու վերաբերյալ (400 բառ),
- Ինչպե՞ս է Ձեր առաջարկի մաս հանդիսացող գեղարվեստական ստեղծագործությունը / ներկայացման բովանդակությունը համապատասխանում այս տեսլականին (250 բառ),
- Ի՞նչ էք ցանկանում ստանալ Perform Europe դրամաբեռնային գործընկերության նախագծին մասնակցելու արդյունքում (250 բառ) և ինչն՞վ էք ցանկանում կիսվել (հմտություններ, գիտելիք, փող, տեսանելիություն, ենթակառուցվածք, փորձ և այլն) (300 բառ)

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս ամբողջ տեղեկատվությունը պահանջվում է ներկայացնել անգլերեն լեզվով:

Ինչպե՞ս կարող եք դիմել: Դիմումների ընդունումը կսկսվի **2021թ. հունիսի 15-ին** - ծանուցումներ ստանալու համար խնդրում ենք բաժանորդագրվել մեր լրագրին: Միևնույն ժամանակ, դուք արդեն կարող եք նախապատրաստվել՝ վերլուծելով վերոնշյալ կետերը և նույնիսկ, եկրորդ փուլի համար պահանջվող գործողությունները: Առաջին փուլի, երկրորդ փուլի և **Perform Europe-ի** ժամանակացույցի մասին ավելի շատ տեղեկություններ կարելի է գտնել անգլերեն լեզվով՝ [Perform Europe-ի կայքում](#):